ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ-23

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 01 2019 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վլադիմիր Հարությունյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ***158515.6 հազ. (մեկ հարյուր հիսունութ միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր)*** ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 158515.6 հազ. (մեկ հարյուր հիսունութ միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4. Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	0015, ք.Երևան,Գր. Լուսավորչի 15
Հ/հ 900011024115	Կենտրոնական գանձապետարան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/հ 900018005380
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 01506257
ՀՀ ԳԱԱ նախագահ	Տնօրեն
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար _____ (Վլադիմիր Հարությունյան)

Հավելված 1
«30» 01 2019 թ.
N 4-23 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «30» 01 20.. թ. N 4-23 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 158515.6 հազ. (մեկ հարյուր հիսունութ միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

ՀՀ ԳԱԱ նախագահ

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ

Տնօրեն

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 2
«30» 01 2019թ.
N 6-23 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

   Ծրագրի իրականացման նպատակը 4 հիմնական գիտական ուղղությունների շրջանակներում (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն) ՀՀ սոցիալ տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումն է: Ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվում ՀՀ կառավարության գործունեության ծրագրից բխող հիմնախնդիրների լուծմանը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
   - Ծրագրի իրականացման ժամանակահատվածը մեկ տարի է՝ սկիզբ 01.01.2019թ., ավարտ՝ 31.12.2019թ.
   - Աշխատանքային խմբերն ըստ ծրագիրը կազմող ենթաբաժինների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ:
   - Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ գիտական հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:
   - Միջանկյալ ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

I. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ:

Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Համաշխարհային զբոսաշրջային քարտեզի վրա Հայաստանը դեռևս չունի իր ուրույն տեղն ու դիրքը: Վերջին շրջանում Հայաստանում իրականացված քաղաքական և տնտեսական բարեփոխումները լայն հնարավորություններ են ընձեռում զբոսաշրջության տարբեր ենթաճյուղերի ուղղությամբ մեր երկիրը դարձնել առավել գրավիչ:

Ներգնա զբոսաշրջության դինամիկ աճին միտված բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել, սակայն դրանք դեռևս ցանկալի արդյունք չեն ապահովել, քանզի անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ենթակառուցվածքներ տուրիզմի տարբեր տեսակների՝ էկոտուրիզմ, կրոնական, մշակույթային, էքստրիմ, հանգստի, առողջարանային տուրիզմ, համար, ապահովել սպասարկման բարձր որակ: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ զբոսաշրջությունը կարող է հանդիսանալ տնտեսության կայուն զարգացման և ներդրումների խթանման նախադրյալ՝ շեշտադրումը կատարելով սփյուռքի հզոր ներուժի, բազմամյա մշակույթի վրա, քանզի զբոսաշրջությունը փոխկապակցված է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի հետ: Դրա զարգացումն իր ուղղակի ազդեցությունն է ունենում շինարարության, ֆինանսական, տրանսպորտային, հանրային սննդի, սպասարկումների և շատ այլ ոլորտների վրա՝ թողնելով հստակ արտահայտված մուլտիպլիկատորի էֆեկտ:

Թեմայի ընտրությունը հիմնավորվում է համաշխարհային շուկայում Հայաստանի զբոսաշրջության մրցունակության ամրապնդման և շարունակական զարգացման անհրաժեշտությամբ: Այդ նպատակով կարևոր ենք համարում այնպիսի հետազոտությունների իրականացումը, որոնք վերաբերում են Հայաստանի զբոսաշրջության ոլորտի մրցակցային առավելությունների և զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խոչընդոտների բացահայտմանը, տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների նոր համատեքստում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների և մարտահրավերների, այլընտրանքային զբոսաշրջային արդյունքների բացահայտմանը, տարբեր կազմակերպությունների կողմից զբոսաշրջության զարգացմանն ուղղված նախագծերի միասնական մշակմանն ու իրականացմանը, հայկական սփյուռքի ընձեռած հնարավորությունների երկկողմ փոխշահավետ համագործակցության մեխանիզմների մշակմանը:

Միջազգային հարկային հարաբերությունների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում: Թեմայի նպատակն է՝ հիմնավորել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանցի ընդլայնման հնարավորությունները տնտեսական զարգացման առումով և առանձնացնել պետության կողմից տրանսֆերտային գնագոյացման հնարավորությունները հարկային ռիսկի նվազեցման առումով: Թեմայի ուսումնասիրության համար դիտարկվել են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ հարկային օրենսդրությունն ու այդ հարաբերությունները կարգավորող առանձին օրենքները, նորմատիվ իրավական ակտերը, կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերը և այլն:

Գործարար միջավայրում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով առաջնային խնդիրներից մեկը միջազգային հարկային հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացումն է: Նման խնդրի իրագործման իրատեսականությունը հիմնավորվում է նրանով, որ հատկապես բիզնես միջավայրի դեմ ուղղված սպառնալիքները, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործությունը իջեցնում են երկրի վարկանիշը միջազգային գործընկեր-երկրների շարքում: Նման սպառնալիքներ կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) և երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ): Հակասությունները և անհամապատասխանությունները դրսևորվում են

հարկային հարաբերությունների ներդաշնակեցման բարդությունների առումով, ինչն առաջին հերթին պայմանավորված է կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանցի սահմանափակման, տրանսֆերային գնագոյացման ոչ համամասնական պայմաններով, որոնց հակազդումը պահանջում է ոչ միայն տնտեսական և քաղաքական բարձր պրոֆեսիոնալ գործողություններ, այլև՝ հասարակությունում գերիշխող սոցիալ-հոգեբանական ձևավորված պատկերացումների փոփոխություն:

II. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ:

Վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործում և դրա բարելավման ուղիները: ՀՀ-ում ագրարային ոլորտը համարվում է տնտեսության հիմնարար ճյուղերից մեկը: Ներկա ժամանակաշրջանում ոլորտի զարգացման առջև ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել ագրոտեխնիկական պահանջներով համապատասխան արտադրական գործընթացների կատարման ու նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածության, ինչպես նաև հետբերքահավաքային և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների կիրառման գործընթացի ցածր մակարդակը: Նշված խնդիրների լուծումը հնարավոր է միայն ներդրումների միջոցով, որոնց կարևորագույն ուղին է հանդիսանում ագրոպարենային համակարգի վարկավորման մեխանիզմների կատարելագործումը ու մատչելիության բարձրացումը: Սակայն հանրապետությունում տվյալ ոլորտի վարկավորման կիրառվող մեխանիզմներն հաշվի չեն առնում գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկությունները, ոլորտի ռիսկայնության բարձր մակարդակը: Վերջինս էլ խոչընդոտող հանգամանք է հանդիսանում բանկերի կողմից մատչելի վարկեր տրամադրելու քաղաքականությանը: Ելնելով այս հանգամանքից կատարվելու են ուսումնասիրություններ վարկավորման կազմակերպատնտեսական մեխանիզմների կատարելագործման հիմնախնդիրների ուղղությամբ և տրվելու են համապատասխան առաջարկություններ:

Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները: ՀՀ տնտեսության ներքին շուկան շատ սահմանափակ է, ինչը սահմանափակում է ներքին պահանջարկը բավարարելով ՀՀ տնտեսությունը երկարատև զարգացման հեռանկարները: Այդ պատճառով կարևոր նշանակություն ունի արտաքին պահանջարկով կողմնորոշումը, որի շրջանակներում Հայաստանը որդեգրել է արտաքին տնտեսական քաղաքականության նոր ուղղություն՝ 2015թ. հունվարից անդամակցելով Եվրասիական տնտեսական միությանը:

Թեմայի շրջանակներում քննարկվելու էն արդեն իսկ առկա իրողությունները, գնահատվելու են ԵՏՄ անդամակցության տարիների ընթացքում ՀՀ արձանագրած տնտեսական հաջողությունները և կրած կորուստները, բացահայտվելու են այն ոլորտները, որոնք չեն կարողացել ամբողջությամբ և լավագույնս օգտագործել իրենց զարգացման ներուժը ԵՏՄ անդամակցության համատեքստում: Այս տեսանկյունից վերլուծվելու են ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքի փոփոխությունները ինչպես աշխարհագրական, այնպես էլ ապրանքային տեսանկյունից, համեմատվելու են նախորդ տարիների հետ՝ տալով համապատասխան գնահատականներ: Անդրադարձ է կատարվելու մաքսադրույքների վճարման նոր կարգին՝ գնահատելով դրա հետևանքները ՀՀ բյուջեի մուտքերի տեսանկյունից, արտոնյալ ժամանակահատվածի ավարտից հետո

ԵՏՄ միասնական մաքսադրույքի կիրառման արդեն իսկ առկա և հնարավոր հետևանքներին: Առանձին քննարկման առարկ է դառնալու ԵՏՄ անդամակցության տարիներին ՀՀ-ում ՕՈՒՆ հոսքերի փոփոխության պատճառները և հնարավոր հետագա միտումները: Թեմային իրականացման նպատակը ԵՏՄ անդամակցությունն առավելագույնս ի նպաստ ՀՀ տնտեսությանը ծառայեցնելու ուղիների մշակումն է:

III. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ:

Հայաստանի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները արդի տնտեսական և աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում: Էներգետիկ ոլորտի վերջին տարիների զարգացումները արմատապես փոխում են էներգետիկ անվտանգության ազգային հայեցակարգերը: Դրանց շարքում անհրաժեշտ է առանձնացնել ֆոտովոլտային տեխնոլոգիաների գնանկումը, հիդրոէներգետիկայի էկոլոգիական հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը, միջուկային էներգետիկայի անվտանգության և թափոնների վերամշակման չլուծված խնդիրները, ածխաջրածնային էներգետիկ ռեսուրսների պահանջարկի կազմի և կառուցվածքի փոփոխությունները, էներգախնայող տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, ավտոմոբիլաշինության մեջ էլեկտրական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը, հասարակության գիտակցությունում կանաչ տեխնոլոգիաների և էկոլոգիական խնդիրների կարևորության կարևորումը և այլն: Նշված զարգացումների արդյունքում անհրաժեշտ է տնտեսագիտական տեսանկյունից քննական վերլուծության ենթարկել Հայաստանի էներգետիկ անվտանգության հայեցակարգը՝ վեր հանելով առկա հիմնախնդիրներն ու մշակել համապատասխան լուծումներ:

Բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Վերջին տասնամյակում բարձր տեխնոլոգիաների զարգացումն ու տեղեկատվական հասարակության կայացումը կարևորագույն խթան են հանդիսացել աշխարհի բոլոր զարգացող երկրների տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացման, կառավարման, ինովացիոն և գիտակրթական համակարգերի, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար և ճանաչվել է գերակա ուղղություն՝ որպես գիտելիքահենք տնտեսության կառուցման հիմնաքար: ՀՀ կառավարությունը կարևորելով բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրել է Հայաստանում բարձր տեխնոլոգիական ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումը: Առաջիկա տարիներին և տեսանելի ապագայում Հայաստանի համար օրակարգային է մնալու տնտեսության զարգացումն ու նրա մրցակցային ներուժի բարձրացումը, ինչն անհնար է առանց բարձր տեխնոլոգիաների անմիջական մասնակցության, քանի որ ապրում ենք աննախադեպ տեխնոլոգիական

նորարարությունների դարաշրջանում, ինչը ազդարարում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» սկիզբ:

IV. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն

Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության: Հետազոտության առարկան առանձին մտածողների հայացքների վերլուծությունն է, հայ տնտեսագիտական մտքի արդի պրոցեսների լուսաբանությունը, որը կարևոր է ներկայում և գործնական, և տեսական առումներով:

ՀՀ ԳԱԱ	**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ**
ՀՀ ԳԱԱ նախագահ	Տնօրեն
_____	_____
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	**ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)

Հավելված 3
«30» 01 2019 թ.
N 4-23 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր	Գիտական հետազոտությունների 4 ուղղություններով՝ 1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ 2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ 3. Ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ 4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի	Գիտական թեմաների կատարում՝ -Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: -Միջազգային հարկային հարաբերությունների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում: -Վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործում և դրա բարելավման ուղիները: -Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները: -Հայաստանի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները արդի տնտեսական և աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում: -Բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների գործունեության	Գիտական հոդվածների, մենագրություններ-ի հրապարակում	I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ	31703.1 39628.9 39628.9 47554.7

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

		պատմություն	հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: -Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության:			
Ընդամենը						158515.6

ՀՀ ԳԱԱ

ՀՀ ԳԱԱ նախագահ

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ

Տնօրեն

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)

Հավելված 4
«30» 01 2018թ.
N 4-23 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	110300.0	22060.0	27575.0	27575.0	33090.0
2	տնտեսական և այլ ծախսեր*	21796.3	4359.3	5449.1	5449.1	6538.9
Ընդամենը (առանց ԱԱՀ)		132096.3	26419.3	33024.1	33024.1	39628.9
ԱԱՀ		26419.3	5283.9	6604.8	6604.8	7925.8
ԸՆԴԱՄԵՆԸ		158515.6	31703.1	39628.9	39628.9	47554.7

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«30» 01 2018թ.
N 4-23 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	5600.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*3000.0*
	գազի ծառայություն	-
	ջրամատակարարման ծառայություն	*600.0*
	կապի ծառայություն	*1500.0*
	աղբահանություն	-
	այլ	*500.0*
2	Գույք	1000.0
3	Սարքեր և սարքավորումներ	3000.0
4	Նյութեր	2291.5
5	Գործուղումներ	1500.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	4000.0
9	Հարկեր, տուրքեր	300.0
10	Այլ	4104.8
Ընդամենը		21796.3

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)

Կ.Տ.

Հավելված 5
«30» 01 2019թ.
N 25-23 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի	տնօրեն, բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	տ.գ.դ	450.0
2	Մարկոսյան Հայկ Աշոտի	փոխտնօրեն, բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող	տ.գ.թ	380.0
3	Բաղդասարյան Քրիստինե Յուրիի	գիտական քարտուղար, ավագ գիտաշխատող	տ.գ.թ	290.0
4	Սուվարյան Յուրի Միքայելի	տնօրենի խորհրդական, գլխավոր գիտաշխատող	տ.գ.դ	100.0
5	Հակոբյան Կարինե Գեղամի	գլխավոր հաշվապահ		300.0
6	Սարինյան Ռոբերտ Ներսեսի	բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	տ.գ.դ	200.0
7	Բաբայան Էբա Արկադիի	առաջատար գիտաշխատող	ա.գ.թ	120.0
8	Զատիկյան Ալվարդ Թևոսի	ավագ գիտաշխատող	տ.գ.թ	140.0
9	Գաբրիելյան Բելլա Վալերիի	ավագ գիտաշխատող	տ.գ.թ	120.0
10	Մանուչարյան Մերի Գագիկի	բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող	տ.գ.թ	190.0
11	Դալլաքյան Սվետլանա Արկադիի	բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող	տ.գ.թ	150.0
12	Ազատյան Լիանա Սամվելի	գիտաշխատող		110.0
13	Զախարյան Արմինե Գրիգորի	գիտաշխատող	տ.գ.թ	78.0
14	Պողոսյան Շողեր Պյոտրի	գիտաշխատող	տ.գ.թ	120.0
15	Սարգսյան Լիլիթ Նորայրի	գիտաշխատող	տ.գ.թ	170.0
16	Հակոբյան Եվգենյա Արտաշեսի	գիտաշխատող	տ.գ.թ	130.0
17	Մակարյան Աննա Ռուզվելտի	գիտաշխատող	տ.գ.թ	120.0
18	Գալստյան Ամալյա Մկրտիչի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
19	Ալոյան Ռուզաննա Ստեփանի	կրտսեր գիտաշխատող		100.0
20	Շահինյան Տաթևիկ Վազգենի	կրտսեր գիտաշխատող		100.0
21	Սարգսյան Անուշ Տիգրանի	կրտսեր գիտաշխատող		50.0
22	Փարսադանյան Տաթևիկ Սմբատի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	90.0

* *Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

23	Իսահակյան Ռազմիկ Կամոյի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	90.0
24	Խաչատուրյան Արամ Վահագնի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	90.0
25	Մկրտչյան Նարեկ Սահակի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	45.0
26	Մխիթարյան Հայկ Սամվելի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	90.0
27	Մարգարյան Հրանտ Ստեփանի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	90.0
28	Ոսկանյան Գոհար Վազգենի	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	90.0
29	Մատինյան Կարինե Անուշավանի	տնտեսագետ		90.0
30	Ոսկանյան Շողեր Հակոբի	տնտեսագետ		81.0
31	Պետրոսյան Լիլիթ Մանվելի	տնտեսագետ		81.0
32	Կյուրեղյան Արփինե Մեխակի	տնտեսագետ		81.0
33	Գրիգորյան Դոնարա Հովիկի	տնտեսագետ		81.0
34	Մարգարյան Սոնա Ատոմի	տնտեսագետ		41.0
35	Կարապետյան Ռուզաննա Արմենակի	կադրերի ավագ տեսուչ		250.0
36	Պետրոսյան Դավիթ Արմենակի	տնտեսվար		150.0
37	Ավագյան Նարինե Հրանտի	գրադարանավար		130.0
38	Բաբայան Մարլենա Մկրտիչի	օպերատոր		125.0
39	Սարաֆյան Դիանա Գևորգի	օպերատոր		125.0
40	Համբարձումյան Մարիետա Կառլենի	օպերատոր		125.0
41	Առաքելյան Անահիտ Միշայի	քարտուղար-գործավար		140.0
42	Մարկոսյան Անահիտ Խաչատուրի	հրատարակչության պատասխանատու		200.0
43	Անտոնյան Արսեն Ռուբենի	վարորդ		150.0
44	Քերոբյան Շավարշ Զավենի	տնտեսական աշխատող		81.0
45	Կարապետյան Հասմիկ Տիգրանի	հավաքարար		134.0
46	Մելքոնյան Ռադիկ Մուշեղի	պահակ		86.0
Ընդամենը				**6294.0**

Կազմակերպության
տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝ _____ (Ռուզաննա Կարապետյան)

Կ.Տ.